ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 01/2024-Վ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան 6 փետրվարի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի փետրվարի 6-ին, ուսումնասիրելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի դիմումը, ինչպես նաև թիվ ՎԴ/0168/05/22 վարչական գործը՝

պարզեց.

I. Նախապատմություն

1. 2021 թվականի նոյեմբերի 1-ին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով Հանձնաժողովում ստացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի դիմումը:

2. Դիմումում նշվում է, որ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը «ՌՈՒՍԱՐՄԻՆՖՈ» լրատվական կայքին տված հարցազրույցի (այսուհետ՝ Հարցազրույց) ընթացքում, որն Անվտանգության խորհրդի Յութուբյան պաշտոնական ալիքում հրապարակվել է 2021 թվականի հոկտեմբերի 21-ին, անդրադարձել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը՝ անելով հայտարարություններ, որոնք չեն բխում Անվտանգության խորհրդի քարտուղարի՝ որպես հանրային ծառայողի վարքագծի

սկզբունքներից: Արմեն Գրիգորյանի կողմից արվել են այնպիսի հայտարարություններ, ինչպիսիք են՝ «հիմնական կառույցների մասով Հայաստանի որոշ քաղաքական շրջանակներ են հայտարարություն արել: Ավելի կոնկրետ՝ Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքական հայտարարություն է արել, որին Պաշտպանության նախարարությունը հստակ պատասխան է տվել, որ այդպես չէ: Կարծում եմ՝ կրկին անգամ ընդդիմադիր դաշտում հայտ ներկայացրած Մարդու իրավունքների պաշտպանը փորձել է քաղաքական դիվիդենտներ շահել՝ քաղաքական տեքստեր արտահայտելով», «եթե նկատել եք, հեղափոխությունից հետո բազմաթիվ օղակներ են եղել, որ հանդես են եկել որպես ընդդիմադիրներ՝ չնայած նրանք պետք է անաչառ լինեն, Սահմանադրական դատարանից սկսած բազմաթիվ կառույցներով վերջացրած», «կարծում եմ՝ Ձեր նշած անձի համար էլ մնացել է մի քանի ամիս ավելի ակնհայտ քաղաքական գործունեությամբ զբաղվելու համար», «իր ժամկետն ավարտվում է և «Իմ քայլը» խմբակցությունը, կարծում եմ, նոր թեկնածուով հանդես կգա», «Դուք տեսե՞լ եք որևէ անաչառ հայտարարություն, ավելի շուտ քաղաքական հայտարարություններ են եղել, գոնե հետհեղափոխական շրջանում»:

3. Դիմումատուն, անդրադառնալով Հարցազրույցի ընթացքում Արմեն Գրիգորյանի խոսքում բերված որակումներին, գտել է, որ վարքագծի կանոնները պետք է բխեն վարքագծի սկզբունքներից, որոնք արդեն իսկ հստակ սահմանված են Օրենքով: Այս սկզբունքներն ինքնին տալիս են հնարավորություն գնահատական տալու Անվտանգության խորհրդի քարտուղարի գործողություններին վարքագծի սկզբունքների բովանդակային բացահայտման պայմաններում՝ հիմք ընդունելով դիմումում ներկայացված փաստական հանգամանքները: Ընդգծել է նաև, այդ գնահատականը բացարձակ անհրաժեշտություն է և ունի բարձր հրատապություն՝ ապահովելու համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բնականոն և խոչընդոտներից զերծ գործունեությունը:

4. Դիմումատուն վկայակոչել է Օրենքի 28-րդ հոդվածի իրավակարգավորումը, միաժամանակ նշել է նաև, որ վարքագծի սկզբունքներից բխող վարքագծի կանոնների ընդունված չլինելու հանգամանքը չի կարող գնահատվել որպես վարույթ հարուցելը բացառող հանգամանք և հանդիսանալ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի կիրառման հիմք:

5. Հղում կատարելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, նույն հոդվածի 4-րդ մասին՝ դիմումատուն խնդրել է Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կողմից հանրային ծառայողի

վարքագծի սկզբունքների և այդ սկզբունքներից բխող կանոնների խախտման առիթով հարուցել վարույթ և որոշել ***վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավասու մարմնին առաջարկություն ներկայացնելու հարցը***:

6. Հանձնաժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 15-ին կայացված թիվ 02/2021 որոշմամբ մերժել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի 2021 թվականի նոյեմբերի 1-ի դիմումի հիման վրա վարույթի հարուցումը:

7. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը 2022 թվականի հունվարի 12-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ խնդրելով անվավեր ճանաչել (վերացնել) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 15.11.2021թ. թիվ 02/2021 որոշումը և **պատասխանողին պարտավորեցնել հայցվորի 2021 թվականի նոյեմբերի 1-ի դիմումի հիման վրա հարուցել վարույթ**:

8. ՀՀ վարչական դատարանը 29.11.2022 թվականին թիվ ՎԴ/0168/05/22 վարչական գործով կայացված վճռով հայցը բավարարել է:

Նշված վճռի դեմ Հանձնաժողովը 09.01.2023թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք, որն ընդունվել է վարույթ:

9. Վերաքննիչ դատարանը 2023 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ մերժել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի վերաքննիչ բողոքը՝ ՀՀ վարչական դատարանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 29-ին կայացված թիվ ՎԴ/0168/05/22 վճիռը թողնելով անփոփոխ:

10. Հանձնաժողովը 2023 թվականի նոյեմբերի 14-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարանի 2023 թվականի հուլիսի 3-ի որոշման դեմ, որը Վճռաբեկ դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի որոշմամբ չի ընդունվել վարույթ: Որոշումը Հանձնաժողովում ստացվել է 2024 թվականի հունվարի 9-ին (Մտից գրություն թիվ Մ-120):

11. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը 2022 թվականի փետրվարի 23-ին դադարել է զբաղեցնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը:

12. Հանձնաժողովը, հաշվի առնելով թիվ ՎԴ/0168/05/22 վարչական գործով կայացված դատական ակտի օրինական ուժի մեջ մտած լինելու հանգամանքը, 2024 թվականի հունվարի 10-ին որոշում է կայացրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի 2021 թվականի նոյեմբերի 1-ի դիմումը՝ առերևույթ վարքագծի կանոնների խախտման հիմքով վարույթ ընդունելու մասին՝ մասնավորապես, առաջնորդվելով թիվ ՎԴ/0168/05/22 վարչական գործով արտահայտված իրավական դիրքորոշմամբ / տես որոշման 10-րդ կետ/

II. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1.Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից տրված Հարցազրույցը Անվտանգության խորհրդի յութուբյան պաշտոնական ալիքում հասանելի է դարձել 2021 թվականի հոկտեմբերի 21-ին:

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը 2021 թվականի նոյեմբերի 1-ին Հանձնաժողով է ներկայացրել դիմում (այսուհետ՝ Դիմում):

2.1 Դիմումի առարկան_վերաբերում է Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի «ՌՈՒՍԱՐՄԻՆՖՈ» լրատվական կայքին տված հարցազրույցին (այսուհետ՝ Հարցազրույց), որի ընթացքում Անվտանգության խորհրդի քարտուղարը անդրադարձել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը՝ անելով հայտարարություններ, որոնք չեն բխում Անվտանգության խորհրդի քարտուղարի՝ որպես հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներից:

2.2 Դիմումով ներկայացվել է պահանջ՝ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կողմից հանրային ծառայողի վարքագծի սկզբունքների և այդ սկզբունքներից բխող կանոնների խախտման առիթով հարուցել վարույթ և որոշել վերջինիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավասու մարմնին առաջարկություն ներկայացնելու հարցը:

3. Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիսանում է հանրային պաշտոն (պետական քաղաքական պաշտոն) զբաղեցնող անձ:

4. Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի կողմից տրված Հարցազրույցի պահին (*2021 թվականի հոկտեմբերի 21-ին)* վարքագծի սկզբունքներից բխող *վարքագծի կանոններ սահմանված չեն եղել:*

III. Վարքագծի կանոններին վերաբելի օրենսդրական կարգավորումներ

1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթ կարող է հարուցվել՝

1) յուրաքանչյուր անձի (անձանց) գրավոր դիմումի հիման վրա.(...)

2. Օրենքի 29-րդ հոդվածով սահմանված ***դիմումին ներկայացվող պահանջներն են***՝ (...),

1) «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների առերևույթ խախտում թույլ տված պետական պաշտոն զբաղեցնող անձի կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի պաշտոն զբաղեցնող անձի կամ **վարքագծի կանոնի առերևույթ խախտում թույլ տված** կամ իրավիճակային շահերի բախման վիճակում առերևույթ հայտնված պետական պաշտոն զբաղեցնող անձի (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի) կամ համայնքի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի կամ նրա տեղակալի՝ պաշտոն զբաղեցնող անձի անունը, ազգանունը, որին վերաբերում է դիմումը, նրա զբաղեցրած պաշտոնը, և պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը, որտեղ անձը պաշտոն է զբաղեցնում.(...):

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **պետական պաշտոն զբաղեցնող անձանց** (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց՝ սույն օրենքով սահմանված **վարքագծի սկզբունքներից բխող** ***<u>վարքագծի կանոնները</u>*** սահմանվում են **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով**: (...)»:

4. «Հանրային ծառայության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Համայնքային պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական և հայեցողական, 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար հանդիսանում է պետական քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ:

5. Օրենքի 24-րդ հոդվածով սահմանված են **Հանձնաժողովի լիազորությունները**: Նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովը.

«**քննում և լուծում է** պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված

անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց **վարքագծի կանոնների խախտումների** և իրավիճակային շահերի բախման դեպքերի ***վերաբերյալ դիմումներ***»:

6. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից ***վարքագծի կանոնների առերևույթ խախտումների*** *կամ իրավիճակային շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:»*:

7. «Հանրային ծառայության մասին» օրենքի 23-27-րդ հոդվածներով սահմանված են Վարքագծի սկզբունքները. հանրությանը ծառայելու գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը:

8. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

9. Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարույթը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ պաշտոն

զբաղեցնող անձի կողմից (...) վարքագծի կանոնների ***խախտման առկայության կամ բացակայության մասին***:

VI. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով Հանձնաժողովին վերապահված լիազորությունների բովանդակությունից հետևում է, որ Հանձնաժողովը բացառապես իրականացնում է կարգավորման հասցեատերերի վարքագծի կանոնների պահպանմանը հետևելու գործառույթ և չի կարող դուրս գալ Օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակից:

Այսպես, դիմումով ներկայացված՝ Անվտանգության խորհրդի քարտուղարի կողմից տրված Հարցազրույցը Անվտանգության խորհրդի յութուբյան պաշտոնական ալիքում հասանելի է դարձել 2021 թվականի հոկտեմբերի 21-ին: Նշված ամսաթվի դրությամբ դեռևս չի գործել պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը, հետևաբար՝ սահմանված չեն եղել նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնները:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

Նշված իրավակարգավորմամբ ամրագրված է այն համընդհանուր սկզբունքը, որի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա: Նշված իրավակարգավորումը բխում է այն օբյեկտիվ իրականությունից, որ իրավահարաբերության մասնակիցը չի կարող վարքագիծը համապատասխանեցնել այնպիսի նորմի պահանջին, որն այդ պահին չի գործում:

Տվյալ պարագայում վարքագծի կանոնն իրավասու մարմնի կողմից ընդունվելուց, սահմանված կարգով հրապարակվելուց և ուժի մեջ մտնելուց հետո միայն համապատասխան կարգավորման հասցեատերը ***կարող է իր վարքագիծը համապատասխանեցնել նորմի պահանջներին***, իսկ վարչական մարմինն իրավասություն կունենա *գնահատելու առերևույթ խախտման հատկանիշների* հիման վրա

հարուցված վարույթում *քննարկվող փաստական հանգամանքների՝* **սույն գործով վարքագծի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:**

«Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածով պաշտոնատար անձի **վարքագծի կանոնների բացակայության պայմաններում** վարչական մարմինը զրկված է այն իրավական հիմքից, որը կարող էր կիրառել և հիմնավոր համարել **վարքագծի կանոնների խախտման առկայությունը**:

Ինչ վերաբերում է դիմումատուի այն դիրքորոշմանը, որ վարքագծի սկզբունքները հստակ սահմանված են Օրենքով, և դրանք ինքնին տալիս են հնարավորություն գնահատական տալու Անվտանգության խորհրդի քարտուղարի գործողություններին վարքագծի սկզբունքների բովանդակային բացահայտման պայմաններում՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է գտնում անդրադառնալ սկզբունքների իրավական նշանակությանն ու կիրառելիության սահմաններին:

Այսպես, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Նշված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքների, ինչպիսիք են տվյալ պարագայում Օրենքի 22-ից 27-րդ հոդվածներով սահմանված հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի սկզբունքները, կիրառությունը ***սահմանափակվում է կոնկրետ վարքագծի կանոնի բովանդակային մեկնաբանությամբ:***

Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ «1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:
2. Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու

նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: 3. Օրենքները և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո»:

Նշված համատեքստում Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենքով սահմանված վարքագծի սկզբունքները, իրավամբ, պետք է կանխորոշեն վարքագծի կանոնների բովանդակությունը, սակայն դրանք նյութական առումով չեն բովանդակում կարգավորման հասցեատերերի վարքագծի կոնկրետ կանոնը: Այս առումով օրենսդիրը լիազորել է Հանձնաժողովին հետևել կարգավորման հասցեատերերի կողմից կոնկրետ վարքագծի կանոնների պահպանմանը, ուստիև, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորմամբ Հանձնաժողովին իրավասություն է վերապահել հարուցել համապատասխան վարույթ վարքագծի կանոնների առերևույթ խախտումների առկայության պարագայում: Միևնույն ժամանակ, օրենսդիրը վարչական մարմնին պարտավորեցրել է համապատասխան վարույթը եզրափակել այնպիսի վարչական ակտով, որով պետք է *հաստատվի կամ հերքվի կոնկրետ* իրավանորմով սահմանված պահանջի առերևույթ խախտման հանգամանքը:

Այսպիսով, վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել բացառապես վարքագծի կանոնի առերևույթ խախտման հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ: Արդյունքում, լուծել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից խախտման առկայության փաստը: Նշված հանգամանքն իր օրենսդրական ամրագրումն ունի Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմում, որի համաձայն՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարութը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից (...) վարքագծի կանոնների **խախտման առկայության կամ բացակայության մասին:**

Նշվածի համատեքստում, մասնավորապես, անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև այն, որ պաշտոնատար անձի կողմից արարքի կատարման պահին վարքագծի կանոն սահմանող իրավանորմերը չգործելու հանգամանքով պայմանավորված՝ վարչական մարմինն իրավասություն չունենալով հետևել կարգավորման հասցեատերերի վարքագծի կանոններին՝ սույն գործով իրավասու չէ նաև ըստ էության քննարկման առարկա դարձնել վերջինիս կողմից դրսևորված արարքի կապակցությամբ վարքագծի կանոնների պահպանված լինելու կամ չլինելու հարցը, հետևաբար նաև իրավասու չէ հաստատել վարքագծի կոնկրետ կանոնի խախտման առկայության փաստը՝ անկախ կոնկրետ պարագայում վարքագծում առերևույթ դրսևորված լինելու հանգամանքից:

Միևնույն ժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածով սպառիչ կերպով ամրագրված են դիմումով հարուցված վարչական վարույթի կարճման հիմքերը: Նշված հիմքերում, սակայն, ներառված չեն կոնկրետ օրենքներով սահմանված լիազորող նորմերի հիման վրա հաստատվող դրույթների չգործելու (ուժի մեջ մտած չլինելու) հանգամանքով պայմանավորված՝ վարքագծի հասցեատերերի կողմից կոնկրետ *իրավանորմերի պահպանմանը հետևելու պարտավորություն վերագրելու* իրավական հիմքի, հետևաբար նաև, թեկուզև, առերևույթ դրսևորված վարքագծի կանոնի *խախտումը գնահատելու իրավական հնարավորության բացակայության պայմաններում*, գործի վարույթի կարճումը:

Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է գտնում ընդգծել, որ սույն դիմումի վարույթ ընդունելը պայմանավորված է եղել թիվ ՎԴ/0168/05/22 վարչական գործով կայացված դատական ակտի առկայությամբ: Ընդ որում դիմողի կարգավիճակը ներկայում փոխված է, հետևաբար, դիմում ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի բնականոն և ենթադրյալ խոչընդոտներից զերծ գործունեությունն ապահովելու տեսանկյունից հրատապությունը բացակայում է:

Չնայած վարքագծի կոնկրետ կանոնի խախտման առկայության փաստը հաստատված չլինելու հանգամանքին, այնուամենայնիվ հիմք ընդունելով այն, որ սույն գործով առկա է նաև Դիմումատուի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավասու մարմնին առաջարկություն ներկայացնելու պահանջ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև դրան: Մասնավորապես, վարքագծի կանոնների խախտումն օրենսդրորեն կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն, մինչդեռ նման պատասխանատվությունը կիրառելի չէ

քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ («Հանրային ծառայության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դրույթներ), որպիսին սույն պարագայում հանդիսանում է Անվտանգության խորհրդի քարտուղարի պաշտոնը:

Հաշվի առնելով վերոգրյալ հիմնավորումները և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 33-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը՝

ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ Է.

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից 2021 թվականի նոյեմբերի 1-ի դիմումով ներկայացված Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի առերևույթ վարքագծի կանոնների խախտման կապակցությամբ քննությամբ հաստատված չի կարող համարվել արարքի կատարման պահին չգործող վարքագծի կանոնի խախտումը, հետևաբար խախտումը բացակայում է:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**